

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԻՒ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ, ԱՅՐ ԹՎՈՒՄ՝ “ՄՈԴԵԼԱՅԻՆ” ՕՐԻՆԱԿԻ ՀԱՄԱՐ

1	Ընթացակարգ	Տևողություն	Ծանոթություն
	2	3	4
I.	Դիմել և ստանալ նախագծման թույլտվություն Երևանի քաղաքապետարանի «Մեկ պատուհան» ծառայությունից,	10 օր	Նախագծման թույլտվության /առաջադրանքի/ անբաժանելի մասն են կազմում տեխնիկական պայմանները, որոնք մատակարարող ծառայությունների /ջրամատակարարում, էլեկտրամատակարարում և այլն/ կողմից տրամադրվում են Երևանի քաղաքապետարանին՝ շրջանցելով այդ ծառայություններից յուրաքանչյուրի հետ կառուցապատողի անմիջական շփման անհրաժեշտությունը միավորվել է 4 քայլ, ժամկետը կրճատվել է 10 օրով
II.	Դիմել և ստանալ շինարարության թույլտվություն Երևանի քաղաքապետարանի «Մեկ պատուհան» ծառայությունից,	10 օր	նմանատիպ օբյեկտների համար իրազեկման պահանջը հանվել է. ժամկետը կրճատվել է 11 օրով
III.	Ստուգում ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության կողմից	1 օր	ստուգումն իրականացվում է շինարարության սկզբնական փուլում
IV.	Հանձնաժողովի կողմից ավարտված շինարարական աշխատանքների ընդունման ակտի ձևակերպում.	Ժամկետը հաշվարկվում է շինարարության տևողության մեջ և ամրագրվում շինթույլտվությամբ	Քաղաքաշինական պետական տեսչության և այլ շահագրգիռ մարմինների մասնակցությունը հանձնաժողովի աշխատանքին համարվում է այդ մարմինների կողմից օրենքով իրենց լիազորությունների սահմաններում կատարված ավարտված շինարարական օբյեկտի վերջնական ստուգում: Ընդունող հանձնաժողովի ակտը ստորագրելուց հետո այդ օբյեկտում տվյալ շինարարությանը վերաբերող այլ ստուգումներ չեն կատարվում՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության և վերահսկողության գործառույթների: միավորվել է 6 քայլ, այդ թվում՝ մատակարարող ծառայություններից յուրաքանչյուրի կողմից տեղում կատարվող ստուգումները,
V.	Դիմել և ստանալ ավարտված շինարարության փաստագրման ակտը Երևանի քաղաքապետարանի «Մեկ պատուհան» ծառայությունից.	3 օր	Ժամկետը կրճատվել է 2 օրով
VI.			ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն առաջարկում է հանել VI և VII տողերը, քանի որ դրանք չեն առնչվում քաղաքաշինական ընթացակարգերի հետ:
VII.			
Ընդամենը՝ 5 քայլ (+2 քայլ՝ Կադաստր), 24 օր (+3օր՝ Կադաստր)			